ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 փետրվարի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

25
(2691)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԻ ՄԱՆՐԱՄԱՍԵՐԸ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը հայտարարել է, որ փետրվարի 23-ին հանդես է գալու հատուկ ուղերձով:

«Ժողովուրդ» օրաթերթն Արցախի իր աղբյուրներից տեղեկացավ, որ Արայիկ Հարությունյանն իր ուղերձում պատրաստվում է հայտարարել Արցախի պետնախարարար Ռուբեն Վարդանյանին պաշտոնից ազատելու մասին, եթե, իհարկե, այս օրերին շրջադարձային ինչ-որ զարգացումներ տեղի չունենան:

Ավելին՝ մեզ ասացին, որ Հարությունյանը սրա մասին մտադիր է եղել հայտարարել դեռեւս փետրվարի 17-ին, բայց քանի որ փետրվարի 20-ին արցախյան շարժման 35-ամյակն էր, որոշել է հետաձգել դա տոներից հետո:

Արցախյան մեր աղբյուրները հայտնեցին, որ ԱՀ պետնախարարի նոր հավանական թեկնածուն, ամենայն հավանականությամբ, Արցախի գլխավոր դատախազ Գուրգեն Ներսիսյանն է:

Նշենք, որ պետնախարարի պաշտոնը նշանակովի է, Արցախի կառավարության ղեկավարին նշանակում եւ ազատում է նախագահը:

Դեռեւս 2022թ-ին Արայիկ Հարությունյանն ինքն էր «բարերար, մեծ փորձ ու գիտելիքներ ունեցող հանրային գործչին» առաջարկել ստանձնել պետնախարարի պաշտոնը, իսկ արդեն մեկ տարի անց ազատում է նրան աշխատանքից, թեեւ Վարդանյանն ինքը չի ցանկանում հրաժարական տալ:

Արցախում վստահ են նաեւ, որ Արայիկ Հարությունյանը նման քայլի է գնում ոչ այնքան իր հոժար կամքով, այլ իր առջեւ նման պայման է դրել Նիկոլ Փաշինյանը:

Բազմիցս գրել ենք, որ Հայաստանի իշխանություններին դուր չի եկել Ռուբեն Վարդանյանի քննադատություններն իրենց հասցեին՝ առ այն, որ Հայաստանի իշխանությունը, ֆինանսական օգնությունից բացի, այլ քայլ չի անում՝ Արցախում ստեղծված ճգնաժամի լուծման հետ կապված:

Նկատենք նաեւ, որ տարբեր առիթներով Ադրբեջանի նախագահն էլ իր հերթին հայտարարում է, որ չի պատրաստվում Ղարաբաղի հարցով բանակցել «Ռուսաստանի Դաշնությունից արտահանված» Ռուբեն Վարդանյանի հետ, անգամ նախապայման է դրել, որ Լաչինի միջանցքի մասով կշարունակի բանակցությունները միայն Վարդանյանի հեռացումից հետո:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը 1 մլն 672 հազար դրամի ներկայացուցչական ծախսեր է կատարել եւ մեկ անձից կասկածելի եղանակով գնման սկզբունքով տարբեր պայմանագրեր կնքել: Դրանցից մեկով, օրինակ, արտաքին գերատեսչության պետական արարողակարգի ծառայությունը 236 հազար 970 դրամի պայմանագիր է կնքել «Պլազա Սիստեմս»- ՓԲԸ-ի հետ: Այդ գումարի շրջանակներում կազմակերպվել է Խորվաթիայի ԱԳ նախարարի՝ Հայաստան այցի համար հյուրասիրություն: 185 հազար դրամ արժողությամբ պայմանագրով, որը կնքվել է «Էքսկլյուզիվ կոնցեռն»-ի հետ, կազմակերպվել է տրանսպորտային ծառայություն Խորվաթիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարի պաշտոնական այցի շրջանակներում: «Երեւան Հյուրանոց» ԲԲԸ-ի հետ պայմանագիրը կնքված է եղել 778 հազար դրամով: Խորվաթիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարի այցի շրջանակներում էլ այս գումարով կատարվել են հյուրանոցային կեցության ծախսերը, եւ նախարարը տեղակայվել է հենց այս հյուրանոցում: Խորվաթիայի արտաքին եւ եվրոպական գործերի նախարարի այցի համար էլ տրանսպորտային ծառայություններն արժեցել են 420 հազար դրամ, պայմանագիրն էլ՝ «Միլենիում Սվիթ» ՍՊԸ-ի հետ, իսկ Խորվաթիայի ԱԳՆ այցի համար էլ 110 հազար դրամ է տրամադրվել, որպեսզի բանավոր թարգմանություն ապահովվի: Ծիծեռնակաբերդ այցելելու համար արարողակարգի ծառայությունը 26 մեխակ էր գնել եւ երկու ծաղկեփունջ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՔՊ-ական պատգամավորները վախի մթնոլորտում են եւ չգիտեն՝ ինչ անել, որպեսզի գտնեն գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի հետ շփվելու, զրուցելու ճանապարհը: Բանն այն է, որ որոշ ՔՊ-ականներ փորձեր արել են նրա հետ շփվելու, սակայն գլխավոր դատախազը նրանց հետ հանդիպելու կամ շփվելու հարցը թողել է օդից կախված: Ավելին, մեզ հասած լուրերի համաձայն՝ որոշ ՔՊ-ականներ, իմանալով, որ փետրվարի 17-ին գլխավոր դատախազի ծնունդն է, փորձել են ծնունդը պատրվակ օգտագործել եւ նրա հետ հանդիպման գնալ, բայց այս փորձն էլ է մնացել անպատասխան: Սա դեռ վերջը չէ. «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ չի բացառվում, որ Աննա Վարդապետյանը ԱԺ գա ՔՊ-ականներից մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու միջնորդությամբ, իսկ թե ով կլինի նա, մանրամասները կներկայացնենք առաջիկայում:

Կառավարությունը պետական բյուջեից 5 միլիոն դրամ աջակցություն է հատկացրել մի շարք հասարակական կազմակերպությունների: Որոշումը ընդգրկված է եղել կառավարության՝ փետրվարի 16-ի օրակարգում, սակայն չզեկուցվող նախագծերի թվում: Թե որոնք են այդ հասարակական կազմակերպությունները, եւ որ ոլորտներում ինչպիսի գործունեություն են իրականացնում, Կառավարության ընդունած որոշման մեջ նշված չէ. որոշման կետերը հույժ գաղտնի են: Նկարագրության մեջ նշվում է, թե տվյալ հասարակական կազմակերպություններն իրականացնելու են հետազոտություններ, ռազմավարական եւ հայեցակարգային փաստաթղթերի պատրաստում եւ փորձաքննությունների կազմակերպման համար խորհրդատվական, մասնագիտական, վերլուծական ծառայություններ: Ընդ որում՝ Ֆինանսների նախարարությունը նախագծի վերաբերյալ դիտողություն է արել եւ նշել, թե աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին եւ արհմիություններին ծրագրով գումարի հատկացումը նպատակահարմար չէ իրականացնել պահուստային ֆոնդից: Նաեւ նշվել է, թե նախագծով հիմնավորված չէ նաեւ գումարի հատկացման հրատապությունը: Առաջարկվել է միջոցառման գծով անհրաժեշտ ծախսերը կատարել ՀՀ վարչապետի աշխատակազմի առկա ռեսուրսների հաշվին: Դիտողությունը ընդունվել է, եւ փոփոխություն է կատարվել: Հավելենք, որ կառավարությունը 2022 թ.-ի պետական բյուջեով էլ 8 մլն դրամ էր հատկացրել հասարակական կազմակերպություններին, եւ կրկին պարզ չէր, թե ում: Մեկ անգամ էլ այդ նույն ծրագրով 46 մլն 976 հազ. դրամ էր հատկացվել: Թե ում էր փոխանցվել այդ գումարը, կրկին հայտնի չէ, քանի որ կառավարության որոշման նախագծի 2-րդ կետը հույժ գաղտնի էր համարվել:

ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ ԷՐ

ՀԵՐԹԱԿԱՆ ՏԱՊԱԼՄԱՆՆ ԱԿԱՆԱՏԵՍ ԵՂԱՆՔ

Փետրվարի 18-ին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի եռակողմ հանդիպումը: Հանդիպմանն անդրադարձ է կատարվել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի նախագծի շուրջ աշխատանքների ընթացքին, ինչպես նաեւ տարածաշրջանային տրանսպորտային ենթակառուցվածքների աղաշրջափակմանն ու երկու երկրների միջեւ դելիմիտացիայի իրականացմանը՝ համաձայն Պրահայում ձեռք բերված պայմանավորվածության: Վարչապետ Փաշինյանը վերահաստատել է հայկական կողմի նպատակամղվածությունը՝ հասնելու այնպիսի պայմանագրի ստորագրմանը, որն իսկապես կերաշխավորի տարածաշրջանում երկարաժամկետ խաղաղությունն ու կայունությունը: Նիկոլ Փաշինյանն ընդգծել է նաեւ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման ու դրա հետեւանքով ԼՂ-ում առաջացած հումանիտար, բնապահպանական եւ էներգետիկ ճգնաժամի փաստը: Կարեւորվել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացի շարունակականության աղահովումը: Հանդիպման արդյունքների վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Հայրենիք» կուսակցության խորհրդի անդամ Խաչիկ Գալստյանի հետ:

-Պարոն Գալստյան, ի՞նչ տվեց այս հանդիպումը մեզ: Հայաստանի ու Ադբեջանի նախագահների հերթական հանդիպո՞ւմն էր, թե՞ ինչ-որ առաջընթաց գրանցվեց, ամեն դեպքում:

-Ինձ համար այդ հանդիպումից սպասելիքները շատ չէին՝ հաշվի առնելով, որ երեք տարի առաջ Նիկոլ Փաշինյանի ներկայությամբ հայկական դիվանագիտությունն ամենախոշոր տապալումն ունեցավ հենց Մյունխենում: Ես ենթադրում էի, որ կրկին «Имнемними»-ի մակարդակի դիվանագիտական ռեվերանսներ ու թոթովանքներ պետք է անի Փաշինյանը: Այն մոտեցումները, որոնք նա ներկայացնում էր արցախյան հիմնահարցի վերաբերյալ, ուղղակի խայտառակություն էր: Մյունխենում մենք հերթական տապալմանն ականատես եղանք, տեսանք, թե ինչպես է Ալիեւը հայ ժողովրդի «աչքը մտցնում» 2021թ-ի ընտրությունները: Ըստ նրա՝ հայ ժողովուրդը համակերպվել է կապիտուլյացիայի հետ, եւ դա ամբողջ հայ ժողովրդի վզին է փաթաթում: Ես ամենեւին էլ այդ կարծիքին չեմ, հայության մի ստվար զանգված, որը արցախյան գոյապայքարի ակունքներում է կանգնած, լիահույս է, որ այս պայքարը շարունակական է, Արցախը գոյություն ունի, վստահ եմ, Արցախը քաղաքական ինքնություն կունենա: Ես կարծում եմ, որ Մյունխենում արձանագրվեց նաեւ հերթական հակառուսական կոալիցիան, եւ Հայաստանի իշխանությունները, ցավոք սրտի, մասն են կազմում դրա, իսկ հետեւանքները մեզ համար խիստ ճակատագրական կարող են լինել:

-Պարոն Գալստյան, մյունխենյան հանդիպումից հետո կողմերը հայտարարեցին, որ պայմանավորվել են շարունակել խաղաղության պայմանագրի շուրջ քննարկումները: Միեւնույն ժամանակ Ալիեւը հայտարարեց, թե խաղաղության պայմանագրում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ դրույթ չպետք է լինի: Ի՞նչ կասեք այս մասին.

-Ցավոք սրտի, այսօր Ալիեւը իրեն թույլ է տալիս հանդես գալ թելադրողի դիրքերից. նա, ինչ-որ առումով, այդ իրավունքը վաստակել է, քանի որ թուրք-ադրբեջանական տանդեմի երազանքների իշխանությունն է այսօր Հայաստանում, նրանք էլ կարողանում են նման լկտի ու ցինիկ պահվածքով իրենց դրսեւորել: Ինչ վերաբերում է խաղաղության պայմանագրում Արցախի հիշատակմանը, այս իշխանությունները ամեն ինչ անում են քաղտնիության քողի տակ, ժողովրդին տեղյակ չեն պահում խնդրի մասին, մարդկանց փաստի առաջ են կանգնեցնում: Հաշվի առելով նոյեմբերի 9-ի չարագուշակ նախադեպը՝ մի օր էլ արթնանալու ենք ու տեսնենք, որ Փաշինյանը նոր փաստաթուղթ է ստորագրել, որտեղ հայ ժողովրդի որեւէ կենսական շահ ներկայացված չի լինելու:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մի քանի պատգամավորներ, խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի գլխավորությամբ, շտաղել են սոցիալական ցանցի իրենց էջերում ցույց տալ, թե աշխատում են, հանդիպում բնակիչներին, բայց իրականում բեմադրություն են կազմակերպում:

Ներկայացված լուսանկարներում, օրինակ, Ալխաս Ղազարյանը ներկայացնում է այցը Գեղարքունիքի մարզի Կուտական համայնք, հանդիպումը բնակիչների հետ:

Նկատենք, որ Կուտականը սահմանամերձ, աղքատ գյուղ է, որտեղ վերանորոգված գրեթե ոչինչ չկա, եւ հարց է, թե պատգամավորները որտեղ են շքեղ պայմաններ գտել Կուտականին մոտ եւ տաքուկ հանդիպում կազմակերպել: ArmLur.am-ը պարզեց, որ ներկայացված լուսանկարները Վարդենիս քաղաք չհասած «Միլկա» ռեստորանում են արվել, որտեղ ՔՊ-ականները տաքուկ նստած ժողով են անում եւ տպավորություն ստեղծում, թե հանդիպում են բնակիչների հետ կամ աշխատում են:

Հիշեցնենք, որ Վարդենիսում իսկապես ցուրտ է, եւ ՔՊ-ականները վախեցել են մրսել:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վարդենիս

ԿԴԻՄԻ ԴԱՏԱՐԱՆ



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ քննչական կոմիտեն 4-րդ անգամ է դիմելու դատարան՝ ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի կալանքը երկարացնելու միջնորդությամբ: Հիշեցնենք՝ 2022թ-ի սեպտեմբերի 1-ին դատախազությունը հայտարարեց, որ Արցախի ՊԲ նախկին հրամանատար, Արցախի նախագահի խորհրդական Միքայել Արզումանյանին մեղադրանք է ներկայացվել 2020 թվականի արցախյան պատերազմի ընթացքում ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող «Արեգա» բարձունքը եւ հարակից մարտական դիրքերն ազատագրած անձնակազմին «նահանջ» հրաման տալու համար:

Արզումանյանը կալանավորվել էր սեպտեմբերի 1-ին եւ մինչ օրս գտնվում է կալանքի տակ: Նրա քրեական վարույթով ակտիվ առերեսումների փուլ է:

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏՆԵՐԸ ԵՎՍ

Այսուհետ փոխվարչապետների հրավերով Հայաստան ժամանած պատվիրակությունների այցերի հետ կապված ծախսերի ֆինանսավորումը եւս կիրականացվի՝ պետական արարողակարգի ծառայության հաշվին եւ ներկայացրած հաշվետվության հիման վրա: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այդպիսի նախագիծ է ներկայացրել ՀՀ արտաքին գործերի նախարարությունը:

Ըստ այդմ, փոխվարչապետներ Տիգրան Խաչատրյանն ու Մհեր Գրիգորյանը եւս Հայաստան պատվիրակություններ հրավիրելու իրավունք կունենան:

Նոր փոփոխությամբ՝ «բարձրաստիճան պատվիրակությունների» հասկացության մեջ առաջարկվում է ներառել նաեւ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետների հրավերով Հայաստանի Հանրապետություն ժամանող օտարերկրյա պետությունների փոխվարչապետների գլխավորած պատվիրակությունները: Նշվում է, թե այդ անհրաժեշտությունը պայմանավորված է շատ երկրներում, այդ թվում՝ նաեւ Հայաստանի Հանրապետությունում փոխվարչապետների՝ գործառութային եւ արարողակարգային ավելի մեծ դերակատարում ունենալու եւ այցերը պատշաճ մակարդակով եւ օպերատիվ կազմակերպելու հանգամանքով:

Հիշեցնենք, որ մինչեւ այս փոփոխությունը նման իրավունք ունեին ՀՀ վարչապետը, ՀՀ նախագահը եւ ԱԺ նախագահը:

100 ԴԻՏՈՐԴՆԵՐ ԿԺԱՄԱՆԵՆ

Հաջորդ շաբաթ Հայաստան կժամանեն Եվրամիության 100 դիտորդները: Այս մասին Մյունխենում Հայաստանի վարչապետի հետ հանդիպումից հետո հայտարարել է Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը: Նրանք կտեղակայվեն Ադրբեջանի հետ սահմանին հարող Հայաստանի տարածքներում: Նրանց թվում են ֆրանսիական ժանդարմերիայի 8 սպա (նրանք գտնվում են ՆԳՆ-ի եւ ՊՆ-ի երկակի ենթակայության տակ) եւ 15 գերմանացի ոստիկան: Իր հերթին Եվրամիության արտաքին հարաբերությունների եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը հայտարարել է, որ Եվրամիության առաքելությունը Հայաստանի ամբողջ տարածքում դիտարկելու եւ տեղեկացնելու է իրավիճակի մասին՝ նպաստելով մարդկանց անվտանգությանն ու Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վստահության ամրապնդմանը: Իր հերթին Եվրոպական պատվիրակության անդամները երեկ այցելել են Ջերմուկ՝ ծանոթանալու ադրբեջանական վերջին հարձակման թիրախ դարձած քաղաքի խնդիրներին, վաղն էլ լինելու են Վարդենիսում, Գորիսում, որոնք եւս նախորդ տարվա ռազմական գործողությունների հիմնական ուղղություններից էին: Փաստահավաք առաքելությամբ Երեւանում գտնվող ԵԽԽՎ համազեկուցողները նաեւ հանդիպել են Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին: Խորհրդարանի խոսնակն ընդգծել է համազեկուցողների՝ սահմանամերձ մարզեր այցելության եւ Հայաստանում հանգրվանած արցախցիների հետ հանդիպման անհրաժեշտությունը: Նաեւ մանրամասներ են ներկայացվել արդեն 69 օր ադրբեջանցիների կողմից փակված Լաչինի միջանցքի ճգնաժամի եւ դրա հետեւանքների մասին: Իսկ ժամանող ԵՄ առաքելությունը երկրորդն է: 40 հոգուց բաղկացած առաջինը խումբը Հայաստանում էր հոկտեմբերի 19-ից դեկտեմբերի 19-ը: Երկրորդ առաքելությունն ուղարկելու որոշումը Եվրահանձնաժողովն ընդունել է 2023 թվականի հունվարի 23-ին:

ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ԱՅՍՕՐ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Լեւոն Բալյանը այսօր ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում ներկայացնելու է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նախագծում հոդված է ավելացվելու, ըստ որի՝ «ինքնիշխանությունից հրաժարվելուն, բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը լրիվ կամ մասնակի սահմանափակելուն ուղղված գործողություններ կատարելը պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով»: Հիմնավորման մեջ նշվում է, որ նախագծի նպատակն անմիջականորեն պետության ինքնիշխանության պաշտպանությանն ուղղված քրեաիրավական միջոցների նախատեսումն է: Նախագծի ընդունման արդյունքում քրեորեն պատժելի արարքներ են համարվելու ինքնիշխանությունից հրաժարվելուն, բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը լրիվ կամ մասնակի սահմանափակելուն ուղղված գործողություններ կատարելը, ինչպես նաեւ ինքնիշխանությունից հրաժարվելուն ուղղված հրապարակային կոչերը:

ՊԱՏԱՍԽԱՆ

ՄԱՐԴԿԱՆՑ ՏԵՂԱՇԱՐԺԸ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԿԱՆԳՆՎԻ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Մարդկանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների անվտանգությունն ու տեղաշարժման ազատությունը Բերձորի միջանցքի երկայնքով պե՛տք է վերականգնվի. Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության բաժնի ղեկավար Դորոտա Դլուչի-Սուլիգան պատասխանել է իմ հրատապ նամակին:

Արցախ վերադարձող 19 հայ երեխաների նկատմամբ մի խումբ ադրբեջանցիների կողմից էմոցիոնալ եւ հոգեբանական բռնության միջադեպի մասին ահազանգել էի նաեւ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լայենին:

Մասնավորապես նշել էի, որ 10-15 ադրբեջանցիներ՝ դեմքերը փակ, ներխուժել են երեխաներին տեղափոխող ավտոբուս, նրանց ենթարկել հոգեբանական տեռորի, բացահայտ սպառնալիքներ հնչեցրել նրանց նկատմամբ:

Ադրբեջանցիները նկարահանել են միջադեպը, որտեղ երեւում են հայ երեխաների վախեցած դեմքերը, միտումնավոր տարածել սոցիալական մեդիայում՝ եւս մեկ քայլ կատարելով դեպի էթնիկ հայերի նկատմամբ ցեղասպանական քաղաքականության կենսագործում:

Հիմնավորելով ադրբեջանցիների գործողություններում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կոպիտ խախտումների առկայությունը՝ տիկին Ուրսուլա Ֆոն դեր Լայենին խնդրել էի ձեռնարկել կոնկրետ քայլեր՝ սահմանելու պատժամիջոցներ այդ հրահանգը տված Ադրբեջանի քաղաքական ղեկավարության նկատմամբ:

Նամակին ի պատասխան՝ ստացել եմ գրություն Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության բաժնի ղեկավար Դորոտա Դլուչի-Սուլիգայից, որը հավաստիացնում է, որ իրենք քաջատեղյակ են միջադեպի մասին:

«Մենք հավասարապես մտահոգված ենք մնում այն տառապանքով, որ ազատ տեղաշարժի շարունակվող սահմանափակումները պատճառում են տեղի բնակիչներին, ինչպես նաեւ հումանիտար հետեւանքներով»,- նշում է Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության բաժնի ղեկավարը:

Տիկին Սուլիգան հավելում է, որ 2022թ. դեկտեմբերի սկզբից մոբիլիզացրել են բոլոր դիվանագիտական ջանքերը՝ հասնելու իրավիճակի լուծմանը:

ԵՄ բարձր հանձնակատար, փոխնախագահ Ժոզեֆ Բորելը, Հարավային Կովկասի եւ Վրաստանում ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը կանոնավոր կապի մեջ են Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանությունների հետ: «Մենք շարունակում ենք պնդել, որ մարդկանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների անվտանգությունը եւ ազատ տեղաշարժը Բերձորի միջանցքի երկայնքով պետք է վերականգնվի՝ համաձայն 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության: Մենք կիսում ենք Ձեր մտահոգությունը եւ կշարունակենք մեր ջանքերը՝ գտնելու իրավիճակի՝ ժամանակին եւ խաղաղ հանգուցալուծում»,- ամփոփել է Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության բաժնի ղեկավարը»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ԱԺ նախագահի որոշմամբ՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովը մարտի 2-4-ը աշխատանքային այցով կգործուղվի Մոսկվա: Թե ինչ քննարկումներ կամ հանդիպումներ է Մոսկվայում ունենալու պատգամավորը, հստակեցված չէ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատգամավորի գործուղման հետ կապված օրապահիկի վճարումը կատարվելու է պետբյուջեի հաշվին, իսկ ճանապարհածախսի եւ գիշերավարձի վճարումը կատարելու է հրավիրող կողմը:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

Ազգային ժողովի ՔՊ խմբակցության պատգամավորներ Գեւորգ Պապոյանը, Արուսյակ Մանավազյանն ու Նարեկ Գրիգորյանը նախագիծ են ներկայացրել եւ առաջարկում են սահմանափակել արտարժույթով հիփոթեքային վարկերի տրամադրումը: Խոսքը նրանց հեղինակած ««Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին է վերաբերում: Այս փոփոխության վերաբերյալ նաեւ փետրվարի 17-ին կազմակերպվել էր աշխատանքային քննարկում: Նշենք, որ օրինագիծն օրեր առաջ ընդունվել է առաջին ընթերցմամբ:

Աշխատանքային քննարկմանը մասնակցել են պատգամավորներ, Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը եւ այլ ներկայացուցիչներ Կենտրոնական բանկից, Կառավարության անդամներ, բանկերի եւ վարկային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Նկատենք՝ առաջարկվող սահմանափակումը նոր բան չէ. այն արդեն կիրառվում է սպառողական վարկերի տրամադրման դեպքում:

Սակայն ընդդիմախոսներից ոմանք կարծում են՝ եթե ընդունվի նախագիծը, դրանով քաղաքացիները կզրկվեն ընտրության հնարավորությունից, ինչպես նաեւ կբարձրանան դրամով տրվող հիփոթեթային վարկերի տոկոսադրույքները: Որոշ փորձագետների կարծիքով՝ նախագիծը որոշ հակասահմանադրական տարրեր է պարունակում:

Որոշ մտահոգություններ ունեն նաեւ վարկային կազմակերպությունների ներկայացուցիչները, օրինակ՝ առաջարկի ընդունման դեպքում վարկային կազմակերպությունները չեն կարող մրցակցել բանկերի հետ եւ դուրս կմնան շուկայից: Առաջարկվել է ընդունվելուց հետո օրենքն ուժի մեջ մտցնել 1 տարի անց:

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄ

Դավիթ Տոնոյանի վերաբերյալ քրեական գործով յուրաքանչյուր երեքշաբթի դատական նիստեր անցկացնելու վերաբերյալ դատավորի հետ ձեռք բերված պայմանավորվածությունը վերջինիս կողմից խախտվեց այս անգամ էլ վերապատրաստման դասընթացների մասնակցելու պատճառով. 2023 թվականի փետրվարի 21-ին դատական նիստ նշանակելու փոխարեն՝ դատական նիստ է նշանակվել 2023 թվականի փետրվարի 28-ին: Ստացվում է, որ Դավիթ Տոնոյանը եւ նույն գործով անազատության մեջ գտնվող մյուս անձինք պետք է շարունակեն մնալ կալանքի տակ այս անգամ էլ դատավորի վերապատրաստվելու պատճառով, ինչը որեւէ կերպ չի բխում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված դրույթներից:

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՎԱՐՔԱԳԻԾ

ԹՄՐԱՄԻՋՈՑ ՊԱՀԵԼՈՒ ԴԵՊՔ

Փետրվարի 17-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, Երեւան քաղաքի Վիլնյուսի փողոցում ծառայություն իրականացնող ոստիկանները նկատել են տարօրինակ վարքագծով մի քաղաքացու, որը իրավապահներին հայտնել է, որ իր մոտ ունի օգտագործված կաթոցիչ, իսկ պայուսակում՝ թմրամիջոց, որից 0.5 գրամ քաշով Կրիստալ տեսակի թմրամիջոցը, որը ձեռք է բերել Telegram հավելվածի միջոցով, պատկանում է իրեն:

Քննչական կոմիտեից ArmLur.am-ին հայտնում են, որ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է հիշյալ քաղաքացու ինքնությունը: Վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել եւ վերցվել է 23.66 գրամ ընդհանուր քաշով բյուրեղանման զանգվածների պարունակությամբ 28 փաթեթ, ինչպես նաեւ կապույտ գույնի պլաստմասե բաղկացուցիչով, մոխրացված պատերով եւ յուրահատուկ հոտով կաթոցիչ:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա՝ նշված անձը ձերբակալվել է:

ՔԿ փոխանցմամբ՝ հայտնաբերված եւ փորձաքննությանը ներկայացված փաթեթների պարունակությունը ենթարկվել է նախնական զննության, իսկ դրանցից որոշները՝ նաեւ որակական հետազոտության: Պարզվել է, որ փաթեթներից 7-ից հանված ընդհանուր 2.64 գրամ քաշով փոշեբյուրեղային զանգվածները հանդիսանում են Մեթամֆետամին տեսակի թմրամիջոց, իսկ մնացած մասի ամբողջական հետազոտության արդյունքները կտրվեն նշանակված դատաքիմիական փորձաքննության եզրակացության շրջանակներում:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ վերոհիշյալ քաղաքացուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով: Վարույթն իրականացնող քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրը, ապօրինի շրջանառության հնարավորությունը բացահայտելու ուղղությամբ: ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություն:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՊՔ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության Երեւանի քաղաքային վարչությունում ստացված օպերատիվ տեղեկությունների իրացման արդյունքում փաստական տվյալներ են ստացվել, որ տեղական ինքնակառավարման մարմնի անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող Երեւան համայնքի Ավան վարչական շրջանի աշխատակազմի քաղաքաշինության եւ հողօգտագործման բաժնի պետը, նախնական համաձայնության գալով նույն վարչական շրջանի այլ պաշտոնատար անձանց հետ, 2022 թվականի դեկտեմբերից մինչեւ 2023 թվականի փետրվարի 17-ն ընկած ժամանակահատվածում կառուցապատման աշխատանքներով զբաղվող քաղաքացիներից պահանջել եւ ստացել են տարբեր չափերի կաշառք գումարներ՝ իրենց իշխանական լիազորություններով պայմանավորված կաշառք տված անձանց օգտին ապօրինի գործողություններ կամ անգործություն կատարելու համար, ինչպես նաեւ նույն նպատակներով ընդունել են տնտեսվարողների կողմից կաշառք տալու առաջարկը, որպիսի գործողությունների արդյունքում իրենց իշխանական լիազորություններն օգտագործել են՝ ի վնաս ծառայողական շահերի՝ էական վնաս պատճառելով պետության, ինչպես նաեւ անձանց իրավունքներին ու օրինական շահերին:

Հերթական անգամ 2023 թվականի փետրվարի 17-ին Ավան վարչական շրջանի աշխատակազմի քաղաքաշինության եւ հողօգտագործման բաժնի պետի պաշտոնը զբաղեցնող անձը, իր իշխանական լիազորություններն օգտագործելով Ավան վարչական շրջանում կառուցապատման աշխատանքներ կատարող Բ.Ս-ի օգտին գործողություն կատարելու, այն է՝ շինարարական աշխատանքներ իրականացնելու թույլտվություն տրամադրելու համար, իր կողմից շահագործվող BMW մակնիշի, MS 922 MS վրացական հաշվառման համարանիշի ավտոմեքենայում 500.000 ՀՀ դրամ գումար ստանալուց եւ տարադրամի փոխանակման կետում այն դոլարի փոխարկելուց հետո կաշառք տված անձի հետ միասին հայտնաբերվել եւ ձերբակալվել են: Դեպքերի կապակցությամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում, ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Անհետաձգելի վարութային գործողությունները կատարելուց հետո նախաքննություն իրականացնելու նպատակով քրեական վարույթն, ըստ քննչական ենթակայության, ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

ԼՈՒՐԵՐ

ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ՄԱՀԱՑԵԼ ԵՆ

Փետրվարի 19-ին՝ ժամը 19:40-ի սահմաններում, Խնածախ գյուղի մոտակայքում ձնահյուսի պատճառով ՊՆ «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենան գլորվել է ձորը, ինչի հետեւանքով մահացել են պայմանագրային զինծառայողներ Ջորանդ Հրանտի Արզումանյանը եւ Ջորակ Սամվելի Երանոսյանը: Այս մասին հայտնում են պաշտպանական գերատեսչության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից՝ մանրամասնելով Սյունիքի մարզում տեղի ունեցած ողբերգական վթարի հանգամանքները, որի մասին քիչ առաջ հայտնել էինք: Նշվում է, որ 2 զինծառայող տարբեր վնասվածքներով տեղափոխվել է կայազորային հոսպիտալ. վնասվածքներ ստացած զինծառայողների վիճակը գնահատվում է բավարար, կյանքին վտանգ չի սպառնում: «Մեքենայի անձնակազմը, եղանակային չափազանց վատ պայմաններում փորձելով ստորաբաժանման մյուս զինծառայողներին օգնության հասնել, խնդիրը կատարելու համար ցուցաբերել է անձնուրացություն: Ցավոք սրտի, դժբախտ պատահարի հետեւանքով վերոհիշյալ զինծառայողները մահացել են: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը կիսում է կորստյան ծանր վիշտը եւ զորակցություն հայտնում դժբախտ պատահարի հետեւանքով մահացած զինծառայողների ընտանիքների անդամներին, հարազատներին եւ ծառայակիցներին»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ՄԵՆԱՀԱՏ ԿՐԱԿՈՑ

2023 թվականի փետրվարի 19-ին զինծառայողի մահվան դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ՋՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՔԿ-ից հայտնում են, որ ՀՀ ՊՆ ՌՈ Իջեւանի բաժնից հաղորդում է ստացվել այն մասին, որ ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Հ.Պ.-ն՝ ծնված 2004թ-ին, զորամասի պահպանության շրջանի մարտական դիրքի տարածքում նույն օրը՝ ժամը 12:45-ի սահմաններում, հայտնաբերվել է գլխի շրջանի հրազենային վիրավորումով: Վերջինս մահացած վիճակում ընդունվել է Իջեւանի բժշկական կենտրոն: Ըստ նախնական տվյալների՝ Հ.Պ.-ն մահացել է իրեն ամրակցված ինքնաձիգից գլխի շրջանին արձակված մենահատ կրակոցից ստացած վնասվածքի հետեւանքով: Իրականացվում է նախաքննություն: Կատարվել է դեպքի վայրի զննություն, հարցաքննվել են մի շարք զինծառայողներ: Քրեական վարույթի շրջանակում նշանակվել է դիակի դատաբժշկական, համալիր ճգաբանական, հետքաբանական, ինչպես նաեւ այլ փորձաքննություններ:

Ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ զինծառայողի մահվան հանգամանքները, այդ թվում՝ նաեւ դեպքին նախորդող շրջանում զինծառայողների շրջանում ոչ կանոնադրային հարաբերության հնարավոր դրսեւորումների առկայությունը պարզելու ուղղությամբ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 17-ից 20-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 137 դեպք, որոնցից 10-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ԴԺԳՈՀ ԵՆ

2022թ. նոյեմբեր ամսին տեղի է ունեցել Տավուշի մարզի Բերդ եւ Նոյեմբերյան քաղաքներում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տեղի բաժանմունքների փակումը: Պետական ռեգիստրի Բերդի եւ Նոյեմբերյանի բաժանմունքների մեկական աշխատողներն ամեն աշխատանքային օր ժամանում են Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաք՝ Հայփոստի գրասենյակ, Երեւանյան 10 հասցեում տեղակայված հանրային ծառայությունների միասնական գրասենյակում կատարում են նույն գործառույթները, ինչպես որ նախկին աշխատավայրում էին կատարում: Բերդ քաղաքի, այդ համայնքի հեռավոր գյուղերի բնակիչները, Նոյեմբերյան քաղաքի, այդ համայնքի Այրում քաղաքի, Բագրատաշեն եւ այլ գյուղերի բնակիչները դժգոհում են, որ անհատ ձեռներեց գրանցվելու, ՍՊԸ բացելու, Բագրատաշենի մաքսակետով ներմուծված ապրանքը մաքսազերծելու նպատակով անհատ ձեռներեց գրանցվելու կամ այն լուծարելու, ընկերություններում բաժնեմաս ունենալու կամ չունենալու մասին տեղեկանք վերցնելու համար ստիպված են մոտ 100 կմ ճանապարհ կտրել, հասնել Իջեւան: Նույն բանը նրանք ստիպված են անել նաեւ 5 օր անց, երբ իրենց դիմումին օրենքով սահմանված ժամկետում պետական ռեգիստրի գործակալությունից գրավոր պատասխան է տրվում: Բերդից եւ Նոյեմբերյանից դեպի Իջեւան ավտոճանապարհը անցնում է սահմանագոտով՝ ադրբեջանական դիրքերի դիմաց, ամեն պահ իրավիճակը կարող է սրվել, ճանապարհով երթեւեկողների կյանքը՝ վտանգվել: Իջեւան քաղաքում՝ Հայփոստի շենքում տեղակայված հանրային ծառայությունների միասնական գրասենյակում աշխատանքային վատ պայմաններ են, փոքր տարածքում՝ ապակեպատ փոքր խցերում, աշխատում են տարբեր ծառայություններ մատուցող 22 աշխատողներ: Բացի այդ, դժվարություն է Պետռեգիստրի Նոյեմբերյանի եւ Բերդի բաժանմունքների աշխատողների՝ Նոյեմբերյան եւ Բերդ Իջեւանից հասնելը եւ աշխատանքային օրվա ավարտից հետո իրենց բնակության վայրերը վերադառնալը: Պետական ռեգիստրը գործում է ՀՀ արդարադատության նախարարության կազմում, եւ այդ նախարարության Պետռեգստրի գործակալության Բերդի եւ Նոյեմբերյանի բաժանմունքների փակումը հարուցել է սահմանամերձ Բերդի եւ Նոյեմբերյանի բնակչության, հատկապես՝ գործարարությամբ զբաղվողների բողոքը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՅ-ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է ՀՀ-ում Թուրքմենստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մուհամեդգելդի Այազովի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Ժաննա Անդրեասյանը, կարեւորելով Հայաստանի եւ Թուրքմենստանի միջեւ ձեւավորված բարեկամական կապերը, նշել է, որ երկու երկրների հարաբերություններում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում համագործակցությունն առանձնահատուկ տեղ է գրավում: Նախարարի խոսքով՝ համատեղ նախագծերի իրականացումը եւ փորձի փոխանակման հնարավորությունը նպաստում են երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը:

ԿԳՄՍ նախարարը միջբուհական համագործակցության զարգացման համատեքստում առանձնացրել է դրա կայուն զարգացման ապահովման հնարավորությունը համատեղ կրթական եւ հետազոտական, ինչպես նաեւ ուսանողների ու դասախոսների փոխանակման ծրագրերի իրականացման միջոցով՝ընդգծելով, որ ՀՀ բուհերում ներկայում սովորում է Թուրքմենստանի 30 քաղաքացի: Ժաննա Անդրեասյանը գիտության ոլորտում համագործակցությունը զարգացնելու եւ ամրապնդելու պատրաստակամություն է հայտնել Թուրքմենստանի գործընկեր կառույցների հետ համատեղ գիտահետազոտական ծրագրեր կյանքի կոչելու միջոցով: Նախարարը կարեւորել է համագործակցության շարունակությունը ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի եւ Թուրքմենստանի գիտությունների ակադեմիայի սեյսմաբանության եւ ֆիզիկայի ինստիտուտի միջեւ: Այդպիսի համագործակցությունը, ըստ նախարարի, հեռանկարային է գիտության ոլորտում նոր ծրագրեր եւ նախաձեռնություններ իրականացնելու համար: Կողմերը դիտարկել են նաեւ մշակույթի եւ ստեղծագործական ոլորտում համագործակցությունը՝ երկու երկրներում անցկացվող միջազգային միջոցառումներին թատերական արվեստի վարպետների, անհատ կատարողների, ստեղծագործական խմբերի եւ մշակութային կազմակերպությունների մասնակցությամբ: Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ 2023 թվականին նշվում է հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 120-ամյակը, եւ ցանկալի կլինի թուրքմեն մշակույթի գործիչների մասնակցությունը հոբելյանական միջոցառումներին: Նախարարը նաեւ տեղեկացրել է, որ ներպետական համաձայնեցման ընթացակարգ է անցել «ՀՀ կառավարության եւ Թուրքմենստանի կառավարության միջեւ մշակույթի ու արվեստի բնագավառում 2022-2024 թվականների համագործակցության» ծրագրի նախագիծը, որը 2022 թ. հունիսին փոխանցվել է թուրքմենական կողմին՝ փոխհամաձայնեցման: Կողմերը համաձայնվել են ծրագրի նախագծի ժամկետները փոխել՝ սահմանելով 2023-2024 թթ.: Երիտասարդության եւ սպորտի ոլորտներում համագործակցության համատեքստում Ժաննա Անդրեասյանն առաջարկել է Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում եւ Երեւանի Օլիմպավանում անցկացնել համատեղ ուսումնամարզական հավաքներ ազատ ոճի ըմբշամարտ, ծանրամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, ձյուդո եւ բռնցքամարտ մարզաձեւերից: Նշվել է, որ այսօրինակ ծրագրերը կնպաստեն երիտասարդ սերունդների միջեւ շփումների համար անհրաժեշտ նոր հարթակների եւ հնարավորությունների ստեղծմանը: ՀՀ-ում Թուրքմենստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մուհամեդգելդի Այազովն իր հերթին շնորհակալություն է հայտնել թուրքմենական կողմի նախաձեռնություններին աջակցելու համար՝ նշելով, որ մեծ ուշադրություն են դարձնում ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությանը: Դեսպանն անդրադարձել է Հայաստանի եւ Թուրքմենստանի համատեղ միջոցառումներին, մասնավորապես՝ նշվել է, որ 2019 թ. նոյեմբերի 5-7-ը Թուրքմենստանում կայացել են Հայաստանի մշակույթի օրեր, որի շրջանակում տեղի են ունեցել մի շարք ցուցադրություններ, փորձի փոխանակման եւ վարպետության դասեր: 2020 թ. մայիսի 4-6-ը նախատեսվում էր իրականացնել «Թուրքմենստանի մշակույթի օրերը Հայաստանում» ծրագիրը, սակայն կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված՝ ծրագիրը հետաձգվել է, եւ այն Հայաստանում կանցկացվի այս տարի: Մուհամետգելդի Այազովը խոսել է նաեւ Երեւանի Կոմիտասի անվան պետական եւ Թուրքմենստանի ազգային կոնսերվատորիաների, Հայաստանի ազգային ագրարային եւ Թուրքմենստանի Ս. Ա. Նիյազովի անվան գյուղատնտեսական համալսարանների, ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմաբանության եւ Թուրքմենստանի գիտությունների ակադեմիայի սեյսմաբանության եւ ֆիզիկայի ինստիտուտների, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, ինչպես նաեւ Երեւանի պետական եւ Թուրքմենստանի Մախթումկուլիի անվան պետական համալսարանների միջեւ համագործակցության ընդլայնման հարցերի մասին: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՕԳՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԿՓՈՓՈԽՎԻ

Ազգային ժողովում մեկնարկում են մշտական հանձնաժողովների նիստերը: Այդտեղ քննարկումներից հետո նույն հարցերը կքննարկվեն արդեն ԱԺ լիազումար նիստում, որը սկսվելու է փետրվարի 28-ին: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում ներկայացնելու է ««Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Համաձայն օրենքի՝ հիմնադրամի շահառու է հանդիսանում նաեւ այն զինծառայողը, որը մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետեւանքով ստացել է առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն:

Ըստ այդմ՝ ամսական հավասար վճարումները վճարվում են առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության ժամանակահատվածի համար, իսկ եթե զինծառայողը վերափորձաքննության արդյունքում ճանաչվում է երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, ապա ամսական հավասար վճարումները դադարեցվում են՝ հարուցելով շահառուների դժգոհությունը: Երկրորդ խմբի հաշմանդամը հիմնադրամից ստանում է 200 000 դրամ (սպայական կազմ), 150 000 դրամ (Պայմանագրային կազմ, զորահավաքային կազմ եւ կամավորներ) եւ 100 000 դրամ (պարտադիր ժամկետային կազմ): Վերափորձաքննության արդյունքում երրորդ խմբի հաշմանդամ ճանաչվելու դեպքում հաշմանդամություն ունեցող անձը կսկսի ստանալ՝

1) սպայի դեպքում՝ շուրջ 74 000 դրամ,

2) պայմանագրային եւ զորահավաքային զինծառայողի, կամավորի դեպքում՝ 66000 դրամ,

3) պարտադիր ժամկետայինի դեպքում՝ 66 000 դրամ:

Բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում, եթե զինծառայողը ճանաչվում է երրորդ խմբի կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ, դրամական աջակցության չափն առաջարկվում է՝ սպայական կազմի զինծառայողներին՝ 75 000 դրամ, պայմանագրային եւ զորահավաքային կազմի զինծառայողներին, կամավորականներին՝50 000 դրամ, պարտադիր ժամկետային կազմի զինծառայողներին՝ 25 000 դրամ: Համաձայն Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալների՝ առ 29.08.2022թ. 44-օրյա պատերազմի հետեւանքով երրորդ խմբի հաշմանդամություն է սահմանվել 114 անձի, որոնք նախկինում հանդիսացել են երկրորդ խմբի հաշմանդամներ: Միաժամանակ, ներկայացվող նախագծով առաջարկվում է սահմանել, որ համատեղ զավակ ունեցող անձը հատուցման իրավունք ունի, եթե զինծառայողը չունի ամուսին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 19 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 43-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՄԱՐԶ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿՈՎ ԳՈՐԾԱՐՔ

Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքում՝ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կազմում գործող Իջեւանի դենդրոպարկի տարածքում, առկա է տան նմանվող միահարկ, սպիտակ մի կառույց: 1994թ.-ին շենքի կառուցման համար պետական բյուջեից ծախսվել է 11 միլիոն դրամ: Ռոմանոս Պետրոսյանը շրջակա միջավայրի նախարարի պաշտոնը զբաղեցրել է 2020թ. հուլիսի 30-ից մինչեւ 2021թ-ի դեկտեմբերի 9-ը: Հավաստի տեղեկություններով՝ նրա պաշտոնավարման օրոք այդ շինությունը փոխանցվել է Բնապահպանական պետական տեսչությանը: Այդ գործարքը կոուպցիոն ռիսկեր է պարունակում: Ռոմանոս Պետրոսյանը պետական վերահսկողության ծառայության պետն է, ինքն ու իր ենթականերն են պետական հիմնարկները ստուգում, ո՞վ պետք է ստուգի նրա կատարած գործարքի օրինականությունը:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ՝ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում է ուղարկել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին, թե 2022թ-ին Տավուշի մարզի սոցիալապես անապահով քանի բնակիչ Տավուշի մարզպետարանի միջոցով պետական բյուջեից ընդհանուր առմամբ որքան դրամական օգնություն է ստացել; Մարզպետարանից հայտնել են, որ 2022թ-ին դրամական օգնության համար Տավուշի մարզպետարան է դիմել 1751 քաղաքացի, որոնց օգնության նպատակով տրամադրված ընդհանուր գումարի չափը կազմել է 79 միլիոն 10 հազար դրամ: Տավուշի մարզպետարանից նաեւ գրավոր տեղեկացրել են, որ 2022թ-ին «Պարգեւատրումներ, դրամական խրախուսումներ եւ հատուկ վճարներ» հոդվածով նախատեսվել է 59 միլիոն 463 հազար 800 դրամ, որից 59 միլիոն 462 հազար 700 դրամը վճարվել է մարզպետարանի թվով 80 աշխատակցի:

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործող առողջապահական շատ հիմնարկների շենքեր վերանորոգման կարիք ունեն: Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործում է 21 բուժհիմնարկ՝ 39 բուժակ-մանկաբարձական կետով: 2022թ-ին վերակառուցվել եւ վերանորոգվել են «Իջեւանի ԲԿ» ՓԲԸ-ի դիալիզի եւ համակարգչային սոնոգրաֆիայի բաժանմունքները, «Իջեւանի ԱԱՊԿ» ՓԲԸ դեղերի պահեստային շինությունը, սանիտարական մեքենաների կայատեղին եւ ծածկը, ընթացքի մեջ է «Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի ինֆեկցիոն մասնաշենքի վերանորոգումը: 2023 թվականին կառուցվելու են նոր շենքեր Այրումի, Կողբի եւ Գետահովտի բժշկական աբուլատորիաների համար: Գույքագրվել են 21 բուժհիմնարկների կազմում գործող 39 բուժակ-մանկաբարձական կետերի կառուցման, հիմնանորոգման կամ վերանորոգման կարիքները, ընթացքի մեջ են Կոթիի ԳԲԱ-ի, Բարեկամավանի ԲՄԿ-ի նախագծա-նախահաշվային աշխատանքները, Կայանավանի, Լուսահովտի, Սարիգյուղի, Իծաքարի, Դեբեդավանի, Ոսկեպարի ԲՄԿ-ների վերակառուցման ծրագրերում ընդգրկելու աշխատանքներ են կատարվում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ քաղ., Օգոստոսի 23-ի փողոց, 19 հասցեում գտնվող 431,8 քմ. բնակելի տուն, 20,9 քմ. անասնաշենք, 2,3 քմ. /3,7 խմ./ պարիսպ, 18,9 քմ. ինքնակամ կառուցված ծածկ, 10,1 քմ. ինքնակամ կառուցված պարիսպ եւ 0,11 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 68160000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Արտաշիսյան պողոտա, 39 շենք, 38/1 հասցեում գտնվող 71 քմ. բնակարան եւ 12.8 քմ. ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 20900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Գյուլիքեխվյան փողոց, 5 շենք, 3 հասցեում գտնվող 79,2 քմ. բնակարան եւ 8,8 քմ. ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 31600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Բաղրամյան պողոտա, 62 շենք, 67 հասցեում գտնվող 41,4 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27430000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Դիլիջան, Դիլիջան քաղ., Գայի փողոց, 34 հասցեում գտնվող 221.7 քմ. բնակելի տուն, 14,9 քմ. ավտոտնակ, 6,6 քմ. մառան, 7 քմ. սանհանգույց եւ 0,0606 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 71570000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ քաղ., Մաշտոցի փողոց, 18 շենք, 59 հասցեում գտնվող 35,5 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11900000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան քաղ., Սեւանի փողոց, 2/1 շենք, 72 հասցեում գտնվող 69,7 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16800000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Գավառ քաղ., Օգոստոսի 23-ի փողոց, 6 հասցեում գտնվող 99,7 քմ. բնակելի տուն, 45,7 քմ. անասնաշենք եւ 0,07 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 8650000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան քաղ., Գ. Նժդեհի փողոց, 10 շենք 4 հասցեում գտնվող 56,26 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 8400000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Արթիկ քաղ., Սասունցի Դավթի փողոց, 20 շենք, 20 հասցեում գտնվող 83,7 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9160000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արարատ քաղ., Խանջյան փողոց, 59/1-5 հասցեում գտնվող 29,15 քմ. առեւտրի սրահ եւ 0,0035 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 11780000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Ավան, Ավան-Առինջ թաղամաս, 2/13 շենք, 49 հասցեում գտնվող 79,3 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 28550000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Ռոստոմի փողոց, 29 շենք, 63 հասցեում գտնվող 106,9 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 73170000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան քաղ., Կենտրոն թաղամաս, 17 շենք, 2 հասցեում գտնվող 92,03 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19700000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան քաղ., Մ. Խորենացու փողոց, 32 հասցեում գտնվող 340,87 քմ. բնակելի տուն, 28,24 քմ. ցախանոց, 17,06 քմ. ծածկ, 4,74 քմ. /8,44 խմ./ պարիսպ եւ 0,0452 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 36500000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Քաջարան, Քաջարան քաղ., Ա. Բակունցի փողոց, 9 շենք, 19-20 հասցեում գտնվող 69,7 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13080000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Գավառ, գյուղ Նորատուս, Սարալանջի փողոց, 1-ին փակուղի 6 հասցեում գտնվող 142,9 քմ. բնակելի տուն, 31,8 քմ. անասնաշենք, 12,9 քմ. անասնաշենք, 2,4 քմ. սանհանգույց, 24 քմ. ծածկ եւ 0,14 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 10700000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Հր. Քոչար փողոց, 7 շենք, 25 հասցեում գտնվող 49,8 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 26800000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Մեղրի, Մեղրի ք?, Ադելյան փողոց, 15բ շենք, 4 հասցեում գտնվող 63,3 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 8480000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս քաղ., 7-րդ թաղամաս, 3-րդ փողոց 5 հասցեում գտնվող 147,8 քմ. բնակելի տուն, 0,55 քմ. /0,94 խմ./ պարիսպ եւ 0,04 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15520000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Նիզամի 2 շենք, 27 հասցեում գտնվող 64,25 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 25300000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի քաղ., Մուշ-2 թաղամաս, 6-6դ շենք, 5 հասցեում գտնվող 96,53 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 17230000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Ավան, Հ?Հովհաննիսյան թաղամաս, 24/2 շենք, 24 հասցեում գտնվող 83,23 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 32400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մառի փողոց, 18/1 շենք, 26 հասցեում գտնվող 73,34 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27330000 ՀՀ դրամ
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի քաղ., Մուշ-2 թաղամաս, 7-րդ փողոց, 2 շենք, 40 հասցեում գտնվող 76,9 քմ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14000000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 09.03.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 06.04.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

Գ

«ԳԻՆԻՆ ՊԵՏՔ Է ԽՄԵԼ ԼԱՎ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ»

Թեքեւ, էլեգանս ու գրավիչ, ինչպես հովազը. Կարմիր գրքում գրանցված կովկասյան ընձառյուծի վերադարձը Հայաստան դարձավ ոգեշնչում ու խորհրդանիշ «Հովազ» գինիների արտադրության համար:

Այդպես, 2018 թվականին Վարդուհի Տոնոյանն ընկերուհիների հետ հիմնադրեց «Վայն Ֆորմուլա» ընկերությունն ու մեկնարկեց «Հովազ» գինիների արտադրությունը: Հետո գաղափար առաջացավ ստեղծել նաեւ համտեսի սրահ, որտեղ տեղացիներն ու զբոսաշրջիկները կարող են գալ, գինի ըմպել ու ծանոթանալ հայկական գինեգործության պատմությանն ու ավանդույթներին: Այդպես ստեղծվեց Դիլիջանում գործող Hovaz Wine RoՕշs համտեսի սրահը, որն արդեն դարձել է տուրիստական սիրելի կանգառներից մեկը:

Բիզնեսում Վարդուհու հաջողության բանաձեւն անդադար աշխատելն է, ինչպես նաեւ կողքին ճիշտ մարդիկ եւ գործընկերներ ունենալը: Գործընկերներից մեկն «Ակբա» բանկն է, որը սկզբից հավատաց գաղափարին ու ձեռք մեկնեց նորաստեղծ բիզնեսին: «Գինին պետք է խմել լավ տրամադրությամբ: Եթե կա երազանք, ապա պետք է ձգտել, չհիասթափվել, նորից ուժ գտնել ու առաջ շարժվել: Հաջողելու համար անհրաժեշտ է փորձել, ազնիվ ու նվիրված աշխատել: Ամեն ինչի կարելի է հասնել նվիրված աշխատելու շնորհիվ: Չկա մի բան, որը կնոջը հասու չէ. միայն ցանկություն է պետք: Կանայք ավելի զգուշավոր են, բայց մի լավ հատկանիշ ունեն. եթե մի բանի հավատում են, մինչեւ վերջ գնում են: Լսելով «Ակբա» բանկի ընձեռած հնարավորության մասին՝ որոշեցինք դիմել եւ մեր բիզնեսի սկզբնական փուլում կարողացանք բանկի աջակցության շնորհիվ իրականացնել մեր արտադրության հիմնական փուլերը»,- նշում է «Վայն Ֆորմուլա» ընկերության համահիմնադիր, տնօրեն Վարդուհի Տոնոյանը:

Առաջիկայում համտեսի սրահում կլինի նաեւ փրփրուն գինու արտադրական գործընթաց, որին կարող են մասնակցել նաեւ հյուրերը: «Ոգեշնչված կին գործարարներով» միջոցառման մասին կարող եք տեղեկանալ՝ այցելելով մեր պաշտոնական կայքէջ:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱՐ» ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մշակույթի համաշխարհայնացման մարտահրավերներին դիմակայելու համատեքստում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանումն ու սերունդներին փոխանցելու գործընթացն ամենաառաջնայինն են: «Արար» հայ ազգային արվեստի պահպանման կենտրոնի առաքելությունն է նորագույն քաղաքակրթության մեջ ոչ նյութական մշակութային ժառանգության կարեւորության բարձրացումը: «Արար» հայ ազգային արվեստի պահպանման կենտրոնը ստեղծվել է 2017 թվականին՝ ՀՀ վաստակավոր արտիստ Արսեն Գրիգորյանի մտահղացմամբ եւ նախաձեռնությամբ. գործում է ՀՀԿԳՄՍ նախարարության ֆինանսական աջակցությամբ եւ Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի հետ համագործակցությամբ: Այն միտված է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանը, տարածմանը, զարգացմանն ու հանրահռչակմանը Հայաստանի ողջ տարածքում:

«Արար» կենտրոնի հիմնական գործառույթը ժողովրդական ստեղծագործության կենսունակության ապահովումն է ազգային մշակույթի ավանդույթները երիտասարդներին փոխանցելու միջոցով:

Այժմ «Արար» կենտրոններ են գործում 8 մարզի 44 համայնքում: Ժողովրդական ստեղծագործության տեղաբնակ 18 մասնագետ դասավանդում է ավանդական երգ ու պար, գորգագործություն, կարպետագործություն, ժանեկագործություն, ասեղնագործություն, խեցեգործություն, քարի եւ փայտի գեղարվեստական մշակում, խաչքարագործություն, մանրանկարչություն:

Ստեղծման օրից «Արար» կենտրոններում ուսումնառություն է անցել շուրջ 5000 եւ ավելի շահառու: Ներկա պահին դասընթացներում ներգրավված է շուրջ 900 երեխա եւ պատանի: «Արար» հայ ազգային արվեստի պահպանման կենտրոններ են գործում Սյունիքի (Տեղ), Տավուշի (Նոյեմբերյան, Այրում, Արճիս, Ջորական, Բագրատաշեն, Բերդավան, Բաղանիս, Դովեղ, Ջուջ–ան, Լճկաձոր, Պտղավան, Ոսկեվան, Կողբ, Կոթի, Հաղթանակ), Լոռու (Դսեղ, Ստեփանավան), Արագածոտնի (Արտենի, Ուջան, Ապարան, Արտաշավան եւ Սաղմոսավան), Գեղարքունիքի (Դպրաբակ, Այգուտ, Ձորավանք), Արարատի (Զանգակատուն, Դվին, Դիտակ, Ջրաշեն, Ջրահովիտ, Մասիս), Արմավիրի (Բաղրամյան, Հացիկ, Մյասնիկյան, Խանջյան, Առատաշեն, Նորապատ), Կոտայքի (Աբովյան, Հացավան, Գեղադիր, Ողջաբերդ, Ջառ, Ջրվեժ) մարզերում: «Արար» կենտրոններում ուսուցումն անվճար է: Դասընթացների համար անհրաժեշտ նյութերն ու պարագաները եւս տրամադրվում են անվճար «Արար» կենտրոնի կողմից: «Արար»-ի նպատակն է ազգային ոչ նյութական մշակութային ժառանգության շարունակականության ապահովումը, ճանաչելիության մեծացումն ու նրա հանդեպ հասարակության հոգածության եւ հարգանքի արմատավորումը, ոչ նյութական մշակութային ժառանգության կենսունակության ապահովումը, Ժողովրդական արվեստի ոլորտում համայնքաբնակ ստեղծագործողներին մասնագիտական աշխատանքով ապահովումը, Հանրապետության լավագույն մասնագետների փորձի փոխանակման ապահովումը գյուղաբնակ երիտասարդ եւ սկսնակ մասնագետների հետ, ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների պահպանության եւ այն կրողների նկատմամբ հասարակության հոգածության բարձրացումն ու կարեւորումը:

ԿԱՐԾԻՔՆԵՐ

«ՔԱՐԴԱՇՅԱՆ ՈՒ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԸ ԱՅԼՄՈԼՈՐԱԿԱՅԻՆՆԵՐ ԵՆ»

Երկրպագուները Քիմ Քարդաշյանին կասկածում էին ՉԹՕ-ների գործունեության մեջ նրա SKIMS լողազգեստների գովազդային արշավից հետո, որտեղ ներկայացված էին «այլմոլորակայիններ»: Արշավի դեբյուտը տեղի ունեցավ Միացյալ Նահանգներում՝ վերջերս ՉԹՕ-ների հայտնաբերման ֆոնին:

42-ամյա հեռուստաաստղն անցած շաբաթ ներկայացրել է լողազգեստների նոր գովազդային արշավը, որի ռեժիսորն է Spring Breakers-ի տնօրեն Հարմոնի Քորինը: «SKIMS SWIM BY HARMONY KORINE-ը մեկնարկում է փետրվարի 21-ին»,- գրել է Քարդաշյանը Instagram-ում՝ հավելելով այլմոլորակայինների էմոջի:

Լուսանկարներում Քարդաշյանն է՝ SKIMS բիկինիով եւ մոնոկինիով, շրջապատված լողազգեստներով մոդելներով՝ ֆոտոշոփով արված այլմոլորակայինների գլուխներով: Այլմոլորակայինների ոգեշնչված արշավը մեկնարկել է այն բանից հետո, երբ անցած շաբաթ Ալյասկայի, Կանադայի եւ Միչիգանի վրայով երեք անհայտ թռչող օբյեկտներ են խոցվել: Մի քանի օր առաջ չինական լրտեսական օդապարիկը, որը մեկ շաբաթ թռչում էր ԱՄՆ-ի վրայով, հրթիռով խոցվել էր Հարավային Կարոլինայի ափերի մոտ: Սոցցանցերում անբացատրելի ակտիվության ֆոնին լուրեր են տարածվել, որ ՉԹՕ-ներն ուղարկվել են այլմոլորակայինների կողմից: Այն բանից հետո, երբ Քարդաշյանը հրապարակել է SKIMS-ի իր նոր գովազդը, երկրպագուները Քարդաշյանին մեղադրել են այլմոլորակային լինելու եւ գործունեություն ծավալելու համար:

«Այս բոլոր ՉԹՕ-ները ոչնչացվել են, որպեսզի մեզ պատրաստեն SKIMS լողազգեստների թողարկմանը. հիմա ամեն ինչ իմաստ ունի»,- գրել է բաժանորդներից մեկը:

«Դրա համար էլ վերջերս մենք ՉԹՕ-ներ ենք տեսնում»,- նկատել է մեկ այլ օգտատեր: «Քիմին փրկեցին մի քանի այլմոլորակայիններ, նախքան նրանց ՉԹՕ-ն կկործանվեր... Պաշտպանի՛ր այլմոլորակայիններին ամեն գնով», - ավելացրել է երկրպագուն:

«Արդյո՞ք նա հիմա մեզ պատրաստում է այլմոլորակայինների համար», - հարցրել է երրորդը:

«Ես գիտեի, որ այս ՉԹՕ-ները ինչ-որ կապ ունեն Քարդաշյանների հետ», - նկատել է մեկնաբանություն գրողների մեկը: «Նա գիտի մի բան, որ մենք չգիտենք», - համաձայնել է մյուսը: Սոցցանցերի որոշ օգտատերեր հայտարարել են, որ Քարդաշյանն ու նրա ընտանիքն իրականում այլմոլորակայիններ են: «Նա հաստատ նրանցից մեկն է... Արթնացե՛ք, խնդրում եմ», - գրել է մեկ այլ օգտատեր:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԿՅԱՆՔ

Ռեժիսոր Սարիկ Անդրեասյանը Instagram-ի իր էջում հայտնել է, որ ինքն ու կինը՝դերասանուհի Լիզա Մորյակը, դուստր են ունեցել: Զույգի երեխան լույս աշխարհ է եկել փետրվարի 19-ին: «Երբ կանգնած էի հիվանդասենյակի մոտակայքի միջանցքում, ծափահարությունների ու «ուռաների» ձայներ լսեցի: Լիզան ծննդաբերում էր, իսկ ես սպասումից լարվել ու քրտնել էի: Մեզ մոտ ամեն բան լավ է: Աղջիկս մազերով է ծնվել, սեւուկ է, մի փոքր էլ՝ դժգոհ, իսկ դա նշանակում է, որ հաստատ ինձ է քաշել»,-կատակել է ռեժիսորը:

Հիշեցնենք, որ Սարիկ Անդրեասյանը նախորդ ամուսնությունից երկու որդի ունի՝Մարկը եւ Մարտինը:

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ԼՈԳԱՆՔԻՑ

Դերասանուհի Անատի Սաքանյանը ինստագրամյան իր միկրոբլոգում հրապարակել է «ջակուզի»-ի մեջ իր լոգանքից լուսանկար: Դերասանուհին իր հետեւորդներին ցուցադրել է գրավիչ արտաքինը:

Նկատենք, որ դերասանուհին, ի տարբերություն համացանցային ակտիվությանը, պասիվ է ստեղծագործական կյանքում: Անատին արդեն տեւական ժամանակ է՝որեւէ հեռուստասերիալում կամ նախագծում չի նկարահանվում:

ՏԱՆ ՆՈՐ ԱՆԴԱՄ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի ընտանիքը նոր անդամով է համալրվել: Բան այն է, որ ԱԺ նախագահը, որն, ի դեպ, բավականին ակտիվ է համացանցային տիրույթում, ինստագրամյան սթորի բաժնում հրապարակել է փոքրիկ նապաստակի, ում նա կերակրում է գազար, եւ ծանոթացնում իր հետեւորդներին իրենց տան նոր անդամի հետ:

● *Փետրվարի 22-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Fe Show» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝8000-12000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐՈՆԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է սկսվում Մեծ պահքի շրջանը, եւ ի՞նչ սննդամթերքներ են թույլատրելի:

Արմենուհի Արզումանյան (22 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեծ պահքի շրջանը տեւում է 48 օր Բուն Բարեկենդանից մինչեւ Ս. Հարության (Զատկի) տոնի նախօրեն: Այս տարի Մեծ պահքը սկսվել է փետրվարի 20-ից: Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերք, քանզի բուսական կերակուրներ ուտելով՝ թուլացնում ենք մեր մարմնական ցանկությունները, որպեսզի հոգեւոր ցանկություններն առաջ գան, որպեսզի մարդը հիշի, որ ինքը, մարմնավոր էակ լինելուց բացի, նաեւ հոգեւոր էակ է, եւ հոգեւոր կյանքն ավելի կարեւորություն ստանա, ու մարդն ավելի շատ մտածի հոգեւոր սննդի մասին: Պահքի ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլեւ մոլի սովորություններից (ծխախոտ, ոգելից խմիչք, թմրադեղ, թղթախաղ, հաճույքի եւ զվարճանքի վայրեր, որկրամոլություն, ագահություն, բղջախոհություն եւ այլն), շատախոսությունից, ստախոսությունից, հայհոյանքից եւ այլ մեղքերից:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կերակրից հրաժարվելն առանց մեղքից հետ կանգնելու անօգուտ է: «Սատանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում եւ չի հոգնում»,- ասում է Ս. Գրիգոր Տաթեւացին:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ի՞նչ անել եւ ու՞մ դիմել, եթե ստիպում կամ արգելում են որեւէ հանրահավաքի մասնակցել:

Մարիամ Ղազարյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հավաքներին մասնակցելուն հարկադրելը կարող է դրսեւորվել տարբեր ձեւերով՝ բռնություն կիրառելով, բռնություն կիրառելու սպառնալիքի ձեւով, գույքը վնասելով: Հավաքներին մասնակցելուն հարկադրելը կարող է դրսեւորվել նաեւ գործատուի կողմից իր աշխատողներին աշխատանքից ազատելու սպառնալիքի ձեւով կամ դրա մասին ուղղակի ակնարկելով: Հավաքներին մասնակցելու կամ, հակառակը, հավաքներին չմասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելը, օրինակ՝ դրամ կամ ծառայություն խոստանալը կամ տալը, նույնպես առաջացնում է քրեական պատասխանատվություն: Մասնավորապես՝ եթե Ձեզ գումար են առաջարկում հավաքին մասնակցելու նպատակով, ապա այդ արարքը գումար առաջարկողի համար առաջացնում է քրեական պատասխանատվություն:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սահմանադրությամբ երաշխավորվում է յուրաքանչյուրի՝ խաղաղ, առանց զենքի հավաքներին մասնակցելու կամ հավաքներ կազմակերպելու իրավունքը: Հավաքների ազատության իրավունքի պաշտպանությունը առավել արդիական է դառնում նախընտրական շրջանում: Քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսվում հավաքների ազատության իրավունքի խախտման համար, այդ թվում՝ նախընտրական շրջանում: Հատկապես տարածված են նախընտրական շրջանում անձանց հավաքներին մասնակցելուն հարկադրելու դեպքերը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարը եւ նախարարի տեղակալը Գիրք նվիրելու օրվա շրջանակում այցելել են Երեւանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց: Նախարարը դպրոցի գրադարանին նվիրել է բրայլյան գրքեր՝ Ստեփան Զորյանի պատմվածքները, եւ աուդիոգրքեր՝ օտար գրողների ստեղծագործություններ, որոնք նախատեսված են դպրոցական ծրագրով ընթերցանության համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: